ՊՕՂՈՍ ՎՐԴ.— Մբ. Փլոբենտիոյ պետական դիւանատան մէջ պահուած և Լիվոռնիոյ հայոց եկեղեցիէն գնուած դիւանաթուղթերու մէջ կը գտնուի 1696ին Պօղոս վրդ.ին առ Խոճա Աղա գրած մէկ թուղթը, որուն վերնագիրն է հետեւեալը. «Քրիստոսի նուաստ ծառայ Պօղոս վրդ. ծառայ եւ աւեղածու Սուրբ Երուսաղիմայ» ասելն. և թուղթին վերջն ալ կ'աւելցնէ. եւ դու անձամբ առեալ եկեսցես յերկրպագութիւն ի Ս. Երուսաղէմ՝ ասս եղելոյ արքուրեանց։ Գրեցաւ թվին ՌՃԽԵ (=1696) յունվի ի դրան Սուրբ Յակոբայ։ Դարձեալ նոյն տեղ իբր յաւելուած գրուած է հետեւեալը. «խնդրեմ սիրեցելոյդ այս գրիս ըռըսպոնդը ի յերուսաղէմ ճշմարտութեամբ գրեսցես և ծանուցես մեզ. թէ ո՞ր պէս եղելի գործառնութիւնք և թէ կամենաս ես ինքնին անձամբ գալ առ ձեզ յօժարիմ Աստուծով, ողջ լեր ի տէր»։ Այս թուղթին մէջտեղը գրուած է Պօղոս վրդ.ի կնիքը և եղերքները՝ ուրիշ հինգ կնիքներ. որք են. Առաջնորդ Յովհաննիսս վարդապետ. Պօղոս վրդ. Ամասիացի. Սուրբ Յակոբա վեհիզ Պապա-Միհաս. Տէր Գրիգոր Տիարպեքիրցի. Յովհաննիս եպս. Հաղբացի։ Պօղոս վրդ. 1702ին գարձեալ կը գրէ Վենետիկի հայոց, վերի կնիքներով. և կը պատմէ Ս. Յակոբի վանքին 300 քէսէ պարտքի տակ մնացած և ստացուածքները գրաւի դրուած ըլլալը, և թէ ինքը պատրիարքին կողմէն Պոլիս ղրկուած է, հոն քարոզած 200 քէսէ դրամ հաւաքած եւ Երուսաղէմ վերադարձած միջոցին Սուսամ պօղազի մէջ Վենետիկեան պատերազմական նաւուն Թրիուզի դափոտանին կողոպտուած է, եւ չորս օր տառապանքներու ենթարկուելէ վերջ՝ ուխտաւորներով միասին և շատ նեղութիւններով հասած է Երուսաղէմ։ (Սրգս. Ցուց. Հատ. Բ. էջ 1241—44)։

Միւնոյն խնդիրին համար՝ նոյն տարին՝ Զմիւռնիոյ Կիրակոս արքեպս.ն ալ յիշեալ Խոճա Աղային կը գրէ. «Քրիստոսի նուաստ ծառայ Կիրակոս արքեպս. Առաջնորդ ի Զմիւռնի քաղաքի. և ի տեղւոյս եղեալ քահանայից եկաց և բնակաց...» իսկ թղթին վերջը հետեւեալը կ'աւելցնէ. «Գրեցաւ ի թվին ՌՃԽԵ (=1696), Նաւասարդի Դ. և Հոկտեմբերի Բ. ի քաղաքն Զմիւռնին, հռոմայեցւոց (թուականին) ՌՃԽԴ»։ Այս թուղթերը ուղղուած են Ալիկոռնայի հայոց՝ ֆրանսական դեսպանին դիմելու և անոր օգնութիւնը խնդրելու Երուսաղէմ գացող 200 ուխտա-